

բու կողմանէ ջերմագին յանձնարարականներ, եւ ինչպէս Տուրացցոյի Արքեպ. ն Fra Giacomo 3 Յնր. 1773 թուականաւ Հոռմէն կը գրէ Սարգիս Արքեպ. ին, նաեւ Կ. Պոլսոյ Կաթողիկեայ Հայոց Առաքելական փոխանորդն (Քեռ)՝ Մէրասեան կամ Տայի-Սիմոնեան Աթանաս Արքեպ. Հոռմկլայ (1758—1779) իր մասին շատ լաւ խօսող նամակ մը գրած է իրեն, ինչպէս նաեւ Ս. Ժողովոյ քարտուղար Մօնս. Պորճիային: Նաեւ Վենետիկէն Սեղբոսեան Յովհաննէս Մարգիզ կը գրէ 3 Յնր. 1773 թուականաւ առ Սարգիս Արքեպ. թէ Դեկտ. 23ին Լիվոնոյէն գրած նամակն ընդունած է, ինչպէս նաեւ Կ. Պոլսէն հետը բերած Խուլէլեան Արրահամ ամիրային յանձնարարականը, թէպէտ եւ ինքն առանց ասոր ալ աջակից պիտի ըլլար իրեն՝ «վասն ի սկզբանէ հետէ սերտ բարեկամութեան առ մեզ», եւ իմանալով որ հիւանդութեանը պատճառաւ հազիւ Զատիկէն ետքը պիտի երթայ Հոռմ, կը հրաւիրէ զինք ի Վենետիկ, որպէս զի խօսին Հոռմ կատարելի գործին մանրամասնութեանը վրայ, եւ պէտք եղած յանձնարարականները տայ Կարգինալներուն: Սեղբոսեան Մարգիզ կը հաղորդէ նաեւ թէ իր եղբարքն Պետրոս եւ Լնտոն կ'ողջունեն զինք, ինչպէս նաեւ «քո աշակերտ Պետրոս Վ. ն., որ է իրեն աքսորակիցն Պետրոս Վ. Էօրտէկճեան, որ այս միջոցին Վենետիկ հաստատուած էր:

Եւ յսպէս ամենայն ինչ նախապատրաստելէն ետեւ՝ 1773 Յունուար 9ին Ս. Ժողովոյ